# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 40 ՏԱՐՈՒՄ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԻՑ

*Այս տարվա նոյեմբերի 29-ին լրանում է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 40 տարին։*

*Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, իրենց ձեռքը վերցնելով իրենց բախտը, հաստատելով Սովետների իշխանություն երկրում ապահովեցին խաղաղություն և ստեղծագործ աշխատանքի հնարավորություն։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը բազում դարերի ընթացքում առաջին անգամ իր բոլոր ստեղծագործ ուժերը ծավալելու հնարավորություն ստացավ։ Սկսվեց բնական հարստությունների պլանաչափ օգտագործումը։ Քառասուն տարում Հայաստանում ստեղծվեց ժամանակակից հզոր արդյունաբերություն։*

*Մեծապես առաջ շարժվեց սոցիալիստական գյուղատնտեսությունը։*

*Ինչպես Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Հայաստանում մենք ականատես ենք կուլտուրայի բուռն ծաղկմանը և գիտության արագ զարգացմանը։*

*Հայաստանը այս բոլոր նվաճումներով նախ և առաջ պարտական է Սովետական Միության Կոմունիստական պարտիային և նրա մարտական ջոկատներից մեկին՝ Հայաստանի Կոմունիստական պարտիային, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությանը, մեր երկրում կոմունիզմի կառուցման համար պայքարող աշխատավոր հոծ զանգվածների ստեղծագործական հսկայական խանդավառությանը։*

*Սովետական Հայաստանում գիտության զարգացումը քառասուն տարվա հսկայական ստեղծագործական աշխատանքի դրսևորումներից մեկն է։*

*Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում, չնայած կյանքի անլուր դժվարին պայմաններին, աշխարհին տվել է մի շարք հռչակավոր գիտնական-հետազոտողներ, որոնք գիտությունը հարստացրել են մեծարժեք աշխատություններով։*

*Սակայն նախքան Սովետական իշխանության հաստատումը, այնուհետև ասում է ընկ. Համբարձումյանը, բուն Հայաստանում պայմանները դեռևս խիստ աննպաստ էին գիտական աշխատանքի համար։ Հայաստանի ներկա տերիտորիայում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտական հիմնարկ։*

*Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո անմիջապես հիմնադրվեց Երևանի Պետական համալսարանը, որը դարձավ երիտասարդ ռեսպուբլիկայի գիտական մտքի առաջին օջախը։ Արագորեն զարգացող ժողովրդական տնտեսությունը հետագայում պահանջեց կազմակերպել տարբեր մասնագիտությունների տեր մեծաքանակ կադրերի պատրաստումը։ Ուստի երեսնական թվականների սկզբներից առաջ եկան նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև առաջին գիտահետազոտական ինստիտուտները։*

*Առաջին երկու տասնամյակում ռեսպուբլիկայի երիտասարդ գիտական միտքը բևեռված էր այն պրոբլեմների վրա, որ առաջադրում էին ժողովրդական տնտեսությունը, հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման ընթացքը։*

*Սակայն կյանքը պահանջում էր գիտության է՛լ ավելի արագ վերելք։ Անհրաժեշտ էր տեղի գիտական կադրերին օգնել գիտական աշխատանքի է՛լ ավելի լայն կազմակերպման գործում։ Այդ օգնությունը ցույց տվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան, կազմակերպելով Ակադեմիայի հայկական ֆիլիալ (Արմֆան)։ Արմֆանի սիստեմում հումանիտար գիտություններից բացի, սկսվեց քիմիայի, բուսաբանության, կենդանաբանության, հողագիտության, բուսաբուծության է՛լ ավելի ինտենսիվ մշակումը։ Թույլ էին ներկայացված կամ համարյա թե չէին ներկայացված ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունները։ Սակայն այդ բնագավառում ուժեղացվեց կադրերի պատրաստումը։*

*ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի և Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումներով 1943 թվականի նոյեմբերին կազմակերպվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։ Գիտությունների ակադեմիայի կազմակերպման որոշումը, որ կայացվեց Հայրենական Մեծ պատերազմի լարված օրերին, ամբողջ հայ ժողովուրդն ընդունեց իբրև իր նվիրական իղձերի իրագործում, իբրև ռեսպուբլիկայում գիտության զարգացման զգալի նախապատրաստական աշխատանքի արդյունք և հայ ժողովրդի կուլտուրայի հետագա աճման նկատմամբ Կոմունիստական պարտիայի հսկայական հոգատարության դրսևորում։*

*Մտաբերելով իրենց ռեսպուբլիկայի ակադեմիայի կազմակերպման շրջանը, Հայաստանի գիտնականները մեծ երախտագիտությամբ են նշում այն վիթխարի աշխատանքը, որ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան կատարեց Հայաստանում գիտության զարգացման և անհրաժեշտ գիտական կադրերի դաստիարակության ուղղությամբ։ Խոշորագույն ռուս գիտնականները գալիս էին Հայաստան և անմիջականորեն ղեկավարում մեր երիտասարդ գիտնականների հետազոտությունները։ Ոչ միայն մեր գիտաշխատողները, այլև Հայաստանի բոլոր աշխատավորները վառ են պահում հռչակավոր գիտնականներ Նիկոլայ Յակովլևիչ Մառի, Նիկոլայ Իվանովիչ Վավիլովի և Վլադիմիր Լեոնտևիչ Կոմարովի հիշատակը, որոնք Հայաստանում կատարած իրենց աշխատանքով առանձնապես նպաստեցին նրա գիտության զարգացմանը։*

*Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը այնուհետև խոսում է ակադեմիայի աշխատանքի սկսման ժամանակ ռեսպուբլիկայի գիտական կյանքի տարբեր ճյուղերի գործերի վիճակի մասին։*